ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 7/26
(վճարովի ծառայություն մատուցելու մասին)

ք. Երևան «01» հուլիսի 2026թ.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ քաղաքացի Հարություն Ղարիբջանյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին վճարովի ծառայություններ մատուցելու մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է վարձատրության դիմաց մատուցել հետևյալ Ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն).
   1.1. Պատվիրատուի գրասենյակի բոլոր համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկում և վերանորոգում,
   1.2. համակարգչային լոկալ ցանցի պրոֆիլակտիկա:
2. Անսարքության վերացման համար անհրաժեշտ պահեստամասերը և նյութերը ձեռք են բերվում Պատվիրատուի կողմից:
3. Կատարողը պարտավորվում է ահազանգ ստանալու դեպքում անսարքությունը վերացնել մեկ օրվա ընթացքում:
4. Ծառայության արժեքը սահմանվում է ամսական 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ եկամտային հարկը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարները:
5. Ծառայության համար վարձատրվում է այն մատուցելու վերաբերյալ կատարողական ակտը Կատարողի կողմից ներկայացնելու և այն երկկողմանի ստորագրելուց (Պատվիրատուի կողմից նաև կնքելուց) հետո՝ յոթ բանկային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով Կատարողի կողմից տրամադրված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
6. Պատվիրատուն հանդիսանում է Կատարողի հարկային գործակալը:
7. Այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցումը անհնարին է կողմերից անկախ հանգամանքների պատճառով, Պատվիրատուն վճարում է Կատարողին նրա կողմից փաստացի մատուցված Ծառայության դիմաց:
8. Պայմանագրով չկարգավորվող կողմերի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
9. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց պարտավորությունների առաջացման հետևանքների, լուծվել Պատվիրատուի կողմից՝ մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով Կատարողին այդ մասին:
10. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց պարտավորությունների առաջացման հետևանքների, անհապաղ լուծվել Պատվիրատուի կողմից, եթե Կատարողը սույն պայմանագրով նախատեսված կարգով չի կատարել կամ անպատշաճ է կատարել իր պարտավորություններից որևէ մեկը:
11. Մինչև Պայմանագրի լուծելը կատարված և Պատվիրատուի կողմից հավանության արժանացած աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ:

12. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Պատվիրատուին ՀՀ Կառավարության կողմից Համաձայնագրով սահմանված համապատասխան ծրագրի պատվիրակման դեպքում՝ այդ ծրագրի ավարտը:
13. Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԱԱՀ՝	**«Կրթական ծրագրերի կենտրոն» ՊԻԳ պետական հիմնարկ**
Հարություն Իշխանի Ղարիբջանյան	**ՀՎՀՀ՝** 02550991
Նույնականացման քարտ՝ 011062957, տրված՝ 04.04.2019թ.ին, 010-ի կողմից,	**Գործունեության վայրի հասցե՝** ՀՀ, ք.Երևան, Ս. Վրացյան 73
ՀԾՀ՝ 2307700218	**Բանկ՝** ՀՀ գանձապետարան
Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մառի փ., 18/13	
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ	**Հ/Հ՝** 900011046670
Հ/Հ՝ 2481000829030005	**Հեռ.՝** 010-57-56-90
Հեռ.՝ 096-99-06-68	**Էլ. Հասցե՝** info@cfep.am
Էլ. հասցե՝ gharibjanyan@gmail.com	
Կատարող՝ Հարություն Ղարիբջանյան	**Տնօրենի պաշտոնակատար՝ Գրիշա Հովհաննիսյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**